



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/10/2022

ՈՐՈՇՈՒՄ N 144-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Գ.Աշոտի փողոցի թիվ 30 հասցեում գտնվող տարածքը վարձակալությամբ տրամադրելու մասին» թիվ 76-Ա որոշման 1-ին կետում «166,0քմ ընդհանուր մակերեսով հասարակական տարածքը և շինությունը» բառերը փոխարինել «0.0166հա ընդհանուր մակերեսով հողատարածքը և հողատարածքի վրա գտնվող 123.5քմ տարածքը» բառերով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառնությունների իրականացումը:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ

ԱՌՈՒՄՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԴԻԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈՒԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀՈԿՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՏՈՌՈՉՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԱՆՁԱՆՅԱՆ ԳԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2022թ. *հոկտեմբերի* « *28* »
ք.Գորիս